«Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

.... 2017 թվականի N .....-Ն

ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԱԾ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2017 թվականի

թիվ -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԱԾ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում
են ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման
առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման
պահանջների՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով
(այսուհետ՝ օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և
խտրականության բացառման պահանջների պահպանման տեսանկյունից
գնահատելու (այսուհետ՝ գնահատում) հետ կապված հարաբերությունները:

2. Պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերը և
մասնակիցներին ներկայացվող որակավորման
պահանջներն ընտրանքային կարգով գնահատում է լիազորված մարմինը:

II. ԸՆՏՐԱՆՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Լիազորված մարմինը գնահատում է հրավերներով և նախաորակավորման
ընթացակարգի հայտարարություններով նախատեսված գնման առարկաների
բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջները՝
կիրառելով ընտրանքի հետևյալ պայմանները՝

1) պատահական ընտրանք, որը կարող է իրականացվել նաև էլեկտրոնային ծրագրի միջոցով: Ընդ որում, պատահական ընտրանքի առարկա հանդիսանում է տվյալ օրվա ընթացքում տեղեկագրում հրապարակված հրավերների կամ նախաորակավորման հայտարարությունների առնվազն հինգ տոկոսը.

2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական մարմինների առաջարկություններ:

4. Պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում գնահատվում են նաև այն հրավերները, որոնց նախաորակավորման հայտարարությունները հանդիսացել են ընտրանքի առարկա: Գնահատող հանձնաժողովի կողմից սույն կետով նախատեսված հրավերը հաստատվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը պատվիրատուն այն տրամադրում է լիազորված մարմնին:

5. Լիազորված մարմնի կողմից գնահատումն իրականացվում է հրավերները կամ նախաորակավորման հայտարարությունները տեղեկագրում հրապարակվելու, իսկ սույն կարգի 4-րդ կետի կիրառման դեպքում՝ հրավերը լիազորված մարմին մուտքագրվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, գնահատումն իրականացվում է պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների պահպանման տեսանկյունից:

6. Լիազորված մարմինը մինչև գնահատումն իրականացնելուն հաջորդող առաջին աշխատանքային օրվա ավարտը գնահատման արդյունքներով տեղեկագրում հրապարակում է դրական կամ բացասական եզրակացություն՝ նշելով վերջինիս հրապարակման ամսաթիվը՝ միաժամանակ ծանուցելով հրավերում կամ նախաորակավորման ընթացակարգի հայտարարությունում նշված պատվիրատուի էլեկտրոնային փոստին: Պետական գաղտնիք պարունակող հրավերների գնահատման արդյունքները լիազորված մարմինը սույն ենթակետով սահմանված ժամկետում գրավոր տրամադրում է պատվիրատուին:

7. Բացասական եզրակացությունը հրապարակվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն գրավոր լիազորված մարմին է ներկայացնում պարզաբանումներ բացասական եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին:

8. Լիազորված մարմինը պատվիրատուի պարզաբանումն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քննարկում և ընդունում է այն, եթե՝

1) պատվիրատուն գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա հիմնավորում է անհամապատասխանության արձանագրման անճշտությունը.

2) անհամապատասխանությունը վերաբերում է գնման գործընթացի կազմակերպման կարգին և պատվիրատուն շտկել է այն:

9. Ներկայացված պարզաբանման քննարկման արդյունքների մասին լիազորված մարմինը սույն կարգի 8-րդ կետով սահմանված ժամկետում տեղեկագրում հրապարակում է ինչպես պատվիրատուի ներկայացրած պարզաբանումը՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակով, այնպես էլ լիազորված մարմնի եզրակացությունը՝ նշելով վերջինիս հրապարակման ամսաթիվը: Պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում պարզաբանման քննարկման արդյունքների մասին լիազորված մարմինը գրավոր տեղեկացնում է պատվիրատուին:

10. Այն դեպքում, երբ լիազորված մարմնի կողմից արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է գնման գործընթացի կազմակերպման կարգին և պատվիրատուն ընդունում է այն, սակայն լրացել է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հրավերում կամ նախաորակավորման ընթացակարգի հայտարարության մեջ փոփոխություններ կատարելու ժամկետը կամ լիազորված մարմինը հրապարակում է պատվիրատուի պարզաբանումը չընդունելու մասին եզրակացություն, ապա գնման ընթացակարգը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած: Եթե պայմանագիրը կնքված է, ապա պատվիրատուն այն միակողմանիորեն լուծում է՝ տվյալ պայմանագրով նախատեսված դեպքում և կարգով:

11. Սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառման դեպքում գնահատումներն իրականացվում են սույն կարգով սահմանված պայմաններով և ժամկետներում: